հրամայեց նաւերով քարեր բերել եւ նետել ծովի մէջ, եւ երբ քարերը ջրի մակերեւոյթին հաւասար բարձրացան, շինեց նոցա վերայ պարիսպը եւ 3 մղոն ծովի միջով հեռու տարաւ։ Շինութիւնը աւարտելուց յետոյ պարսպի մուտքին կախել տուեց երկաթէ դռներ եւ 100 մարդ հեծելազօր դրեց մուտքը պաշտպանելու համար. ապա այդտեղ կարիք կար 5000 զօրք պահելու. դռան վերայ շինեց մի աշտարակ։ Երբ սորանից յետոյ խաքանին[1] ասացին, թէ "Անուշիրվան քեզ խաբեց, քեզ պատկեց ոչ իւր դստեր հետ եւ իրան քեզանից պաշտպանեց", թուրքը ոչինչ չկարողացաւ անել։

Անուշիրվան նշանակեց կառավարիչներ բատ կարգի կարգի եւ նոցանից ամէն մէկին տուեց մի մի գաւառ շահի տիտղոսով. նոցա թուում Ջաբալի խաքանին, որ Սարիրի[2] տէրն էր եւ կը կոչուէր Վահրարզանշահ, եւս Գիլանի իշխանին, որ էր Գիլանշահ, Տաբարսարան-շահին[3], Լակզի թագաւորին, որ կը կոչուէր Ջարշանշահ, Մասքատի՝ որի տէրութիւնը թուլացած էր, Իրանիի՝[4], որ կը կոչուէր Իրանշահ, Շարվանի՝ որ կը կոչուէր Շարվանշահ[5].

---

1 Հմմտ. ռուսաց մատենագրերի Karaнъ. այս տիտղոսը սովորաբար կը կրէին Խազարաց թագաւորները։

2 Jakuţ։ Սարիր մեծ տերութիւնէ Ալանաց եւ Բաբ-էլ-Աբուաբի մէջ. դէպի այս երկիրը միայն երկու ճանապարհ կայ, մի՝ Խազարաց երկրից, միւսը՝ Հայաստանից,։ Ըստ իւր դիրքի այժմեան Դաղստանին կը համապատասխանէ։

3 Istaxri։ Տիրսըրան։

4 Marquart իրաւամբ կ'ուղղէ ايرانشاه փոխանակ ليرانشاه (Eranšahr, էջ 119). իցէ նոյնն է Ա. Կաղանկատուացու Երանշահն։

5 Istaxri այս երկրները կը դնէ Դերբենդի մօտերքը, միմեանց կից՝ "Կասպից ծովի ափին, Լէկզիներին կից, Մասքատ անուանով երկիր կայ. սոքա մեծ ազգ են . . . Նոցանից վերեւ կը բնակին Մոլուկ, իսկ ստորեւ՝ Մաշակ, Ակրայ եւ Մահան (գեղերը)։ Սոցա եւ Բաբ-էլ- Աբուաբի մէջ գտանուում է Տիրսըրան երկիրը, որի բնակիչք տեղացիների մէջ